ՀՈՅԱԿԱՊ ՅՈՐԵԼԵԱՆՆԵՐ

Հայ ցեղի պատմութեան ամենախոշոր և ամենահոյակապ գործերից մէկն է հայկական գրերի գիւտը։

Նա հայ մտքի վերածնութեան ամենամեծ աղդակներից և հայկական կուլտուրայի ամենահիմնական տարրերից մէկն է։

Հայ գրերի գիւտով հայութիւնը ամենամուր կամուրջ ձգեց իր և Արևմուտքի միջև, բարոյական կապ հաստատեց մտածող մարդկութեան գաղափարների և տրամադրութիւնների հետ։

Այդ լուսաճաճանչ գիւտով հայութեան համար ժողովրդական դարձան մի շարք թարմացնող և ազնուացնող բարոյական և հասարակագիտական գաղափարներ, որոնք առաջ միայն բացառիկ անձնաւորութիւնների մենաւաճառութիւն էին կազմում։

Տառերի յայտնագործութեամբ սրբագործվեց հայ լեզուի իրաւունքը թէ ատենագրութեան և պաշտօնագրութիւնների մէջ և թէ դպրոցական կրթութեան ասպարէզում ու ազգային հատուածների փոխադարձ յարաբերութիւնների մէջ։

Մտքի, փիլիսոփայութեան, գաղափարների հոսանքը, որ գրերի միջոցով տաւ յունական, ասորական և ապա եւրոպական մտաւոր աշխարհներից, չը թողեց, որ իսպառ մարի հայութեան մէջ գիտակցութեան լոյսը, գաղափարականի հուրը։

Անցան դարեր, մեռան մարդիկ, բայց մատենագրութիւնը թողեց մեզ համար աւանդութիւններ նախնի գործողների և նրանց տեսչների մասին։

Տառապանքի և սարսափի դարերում անկարելի էր շատ բան զարգացնել հայ մատենագրութեան ասպարէզում. բայց այն, ինչ կարողացաւ դիմանալ և մնալ, ապացոյց է մարդկային հոգու անընկճելիութեան և յաւիտենական յոյսերի զօրութեան։

Հայութիւնը գրկաթաց կերպով իւրացրեց և մի ուրիշ կարևոր գիւտ։ Դա տպագրութեան ներմուծումն էր հայ դպրութեան մէջ։ Տպագրութիւնը, որ մեր ժամանակի ամենազօրաւոր գործոններից մէկն է նորագոյն մարդկութեան հասարակական կեանքում, մուտք գործեց մեր իրականութեան մէջ չորս դար առաջ և ըսկիզբը դրեց հայ տպագրական գործին մեզանում։

Ողջունելով երկու յոբելեանները, մենք մի ջերմ իդձ և անձկալի փափագ ունինք, որ գրերի գիւտին և տպագրութեանը վերապահուած խոշոր վերանորոգիչ զօրութիւնը տայ հայութեանը այն արգասաւոր արդիւնքները, որոնցով այնքան հոխ է, բարգաւաճ և հզօր ներկայ դարի լուսաւոր մարդկութիւնը։

* *

Մեր առաջ մի գեղեցիկ օրինակ է դրվում, որին հետևելու համար ջերմաջերմ հրաւիրվում է մեր հասարակութիւնը։

Մեր ընթերցողները կարդացին «Մշակի երէկվայ համարում այն գեղեցիկ և համակրելի նուիրատուութեան մասին, որ արեց Էջմիածնի Սինոդը դպրոցական ֆոնդի համար։

Սինոդը վեհափառի առաջարկութեամբ նիստ գումարեց և որոշեց իր տրամադրութեան տակ եղած գումարներից յատկացնել դպրոցական ֆոնդի համար 15,000 ռուբլի։

Որքան գեղեցիկ որոշում։

Այդ գումարով լուրջ սկզբնաւորութիւն է տրվում դպրոցական ֆոնդ ժողովելու գործին և հանդէս դրվում մի հոյակապ և պատկառելի օրինակ։

Օրինակ, որին պէտք է հետևել։

Օրինակ, որը ապացոյց է այն համակրելի երևոյթին, որ հայ դպրոցական գործի գեկավարող կենտրոնական մարմինը խոշոր և էական նշանակութիւն է տալիս դպրոցական ցանցի զարգացման և դպրոցական ապահովութեան խնդրին։

Օրինակ, որը այնքան համապատասխանում է ժողովրդական կրթութեան նախանձախնդիրների տրամադրութեանը, իդձերին և փափագներին։

Մի ամբողջ տարի ժամանակ է տրված ժողովարարութիւններ անելու դպրոցական ֆոնդի կազմութեան համար։

Եւ մեր հասարակութիւնը պէտք է օգտվի իրագործելու արդիւնաւոր նպատակը, որը միչտ էլ զգացվել է մեր կեանքում և այժմ ասպարէզ մղվեց համազգային այն մեծ ոգու առիթով, որ լուսաւորված է հայ տառերի գիւտի 1500 ամեայ և հայ տպագրութեան 400 ամեայ յոբելեանների երփներանգ ճաճանչներով։

Դպրոցական ֆոնդը կոչված է դարձնելու հայ գիրը սեփականութիւն մեր ժողովրդական մասսայի համար և արգասաւորելու ժողովրդական կեանքը գրի և գրականութեան հետ մուտք գործող գաղափարների վեհագոյն ոգևորութեամբ, գիտութիւնների հեղինակաւոր ցուցումներով, մարդկային ստեղծագործական աւիշի անսպառ խմորումներով։

Դպրոցը, գիրը, գրականութիւնը միմեանց չշոչափում են և մէկը միւսին չարունակում։ Եւրոպական գործի զարգացման ու ապահովութեան խնդիրը ժողովրդական առաջադիմութեան նպաստող խոշորագոյն խնդիրներից մէկն է։

Հետևենք գեղեցիկ օրինակին.

(Մշակ) Ա. ԲԱԼԱՆԹԱՐ